



## ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի ընդհանուր  
տնտեսագիտության ամբիոնի պրոֆեսոր,  
տնտեսագիտության դոկտոր

## ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԵՊՀ տնտեսագիտության և միջազգային տնտեսական  
հարաբերությունների ամբիոնի պրոֆեսոր,  
տնտեսագիտության դոկտոր

## ԷԼՅԱՆՈՐԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի դասախոս,  
տնտեսագիտության թեկնածու

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ապրանքային շուկաներում մենատիրական գործունեության արգելումը տնտեսական մրցակցության պաշտպանության առաջնահերթություններից է: Սակայն պետական կարգավորող մարմնի վերջին տարիների գործունեությունն այդ առումով անարդյունավետ է: Դա դրսևորվում է ոչ հրապարակային գործելու, վերլուծությունները մասնագիտական ոչ բավարար մակարդակով կատարելու մեջ, որին հիմնականում նպաստում են օրենսդրական բացերն ու անորոշությունները:

Հողվածում առաջարկվում է պետական մարմնի ոչ հրապարակային գործելու համար պաշտոնատար անձանց նկատմամբ պատժամիջոցներ սահմանել: Հանձնաժողովի և նրա յուրաքանչյուր անդամի անկախությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է դրա ձևավորման ու հանձնաժողովի անդամների վերանշանակման նոր մեխանիզմ կիրառել: Կոռուպցիոն ռիսկերը մեղմելու նպատակով առաջարկվում է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածում առկա պատժամիջոցներին առնչվող անհատակությունները վերացնել՝ կիրառելով միարժեք, տարակարծություն չպարունակող չափանիշներ:

**Հիմնաբառեր.** տնտեսական մրցակցություն, ապրանքային շուկա, մենատիրական գործունեություն, մրցակցության պաշտպանություն, հանձնաժողով

JEL: D42, L12, L4

Մենատիրական գործունեության<sup>1</sup> վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը արգելքներ և սահմանափակումներ է պարունակում: Ըստ սահմանադրության 59-րդ հոդվածի երկրորդ մասի՝ մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով: Նույն հոդվածի երրորդ մասով արգելվում են շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնությունները<sup>2</sup>: Այսինքն՝ երկրի հիմնական օրենքով արգելվում է մենատիրական գործունեությունը: Հիմնական օրենքի տրամաբանությունը հուշում է, որ պետք է կամ բոլոր մենաշնորհները (մենատիրությունը) վերացնել և, միաժամանակ, թույլ չտալ նոր մենատերերի առաջացումը, կամ օրենքով սահմանել դրանք: Բնական մենաշնորհների (ինչպես նաև կարգավորվող հանրային ծառայությունների) առումով խնդիր չի առաջանա: Նման արգելք սահմանված է նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում<sup>3</sup> (այսուհետև՝ Օրենք): Չնայած Օրենքում չի սահմանվել «մենատիրական գործունեություն» եզրույթը, սակայն դրա տեսակները և գործունեության հետ կապված պահանջներն ու հիմնարար դրույթները ներկայացված են 5-ից 7-րդ, 16-րդ և 36-րդ հոդվածներում<sup>4</sup>: Հիմնախնդիրը արհեստական մենաշնորհները (և առհասարակ՝ մենատերերին) օրենքով ամրագրելն է:

Նախ՝ փորձը ցույց է տալիս, որ հասարակության համար ոչ պակաս վտանգավոր են օրենքով սահմանված մենաշնորհները: Դրա վառ օրինակը «ԱրմենՏել» ընկերությանը 15 տարով հեռահաղորդակցության ինը ապրանքային շուկաներում միայնակ գործելու լիցենզիայի տրամադրումն էր: Դրա հետևանքով, այդ տարիների ընթացքում, հեռահաղորդակցության բնագավառում ոչ մի էական կապիտալ ներդրում չիրականացվեց, որի պատճառով այդ շուկաներում էապես վատացավ ծառայությունների որակը, ստեղծվեց ծառայությունների մատուցման արհեստական պակասուրդ, սահմանվեցին համապատասխան ծառայությունների մենաշնորհային բարձր սակագներ (չհիմնավորված): Եվ միայն 2004 թ. նոյեմբերին միայնակ գործելու լիցենզիայի դադարեցման և այդ շուկաներում նոր օպերատորի ի հայտ գալու շնորհիվ այս բնագավառում շոշափելի ներդրումներ կատարվեցին, կտրուկ նվազեցին ծառայությունների սակագները, բարձրացավ ծառայությունների մատուցման որակը:

<sup>1</sup> Մենատիրական գործունեությունը գերշահույթներ ստանալու նպատակով ապրանքային շուկաներում շուկայական պայմանների սահմանման միջոցով տնտեսավարող սուբյեկտների ունեցած շուկայական իշխանության օգտագործումն է:

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրություն (փոփոխություններով), ընդունվել է 2015 թ. դեկտեմբերի 6-ին անցկացված հանրաքվեով և ուժի մեջ է մտել դեկտեմբերի 22-ին.

Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայք՝ [www.arlis.am](http://www.arlis.am):  
<sup>3</sup> Տե՛ս Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին ՀՀ օրենքը, 5 դեկտեմբերի 2000 թ., ՀՕ -112, [http://competition.am/uploads/resources/Law\\_of\\_SCPEC\\_12\\_04\\_2011\\_arm.pdf](http://competition.am/uploads/resources/Law_of_SCPEC_12_04_2011_arm.pdf)

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղը:

Երկրորդ՝ արհեստական մենաշնորհների դեպքում անհայտ են մնում այն չափանիշները, որոնցով առաջնորդվելով, որոշակի ապրանքային շուկաներում օրենքով մենաշնորհ է սահմանվում: Ի՞նչ երաշխիք, որ այսօրվա «հայտնիները» չեն հայտնվի օրենքով սահմանվող մենաշնորհների ցանկում (փորձը ցույց է տալիս, որ պետական օժանդակություն ստացողների զգալի մասը այդ «հայտնիներից» է):

Երրորդ՝ «հայտնիները» վաղուց են սովորել մենաշնորհից խուսափելու «դասերը»: Բավական է, որ Հնդկաստանի որևէ անհայտ նահանգի քաղաքացու անունով ստեղծվի մի առևտրային կազմակերպություն, որը հայկական մենաշնորհային ապրանքային շուկայում ընդամենը մեկ տոկոս բաժին ունենա, իրավական առումով, օրենքի տառին համապատասխան, մենք այդ ապրանքային շուկայում չենք ունենա մենաշնորհ<sup>5</sup>: Այլ կերպ ասած՝ մենաշնորհի կարգավիճակը, ցանկության դեպքում, միշտ էլ կարելի է շրջանցել: Դրանից շուկայում գործող «նախկին» մենաշնորհային առևտրային կազմակերպության շուկայական մեծ իշխանությունը չի պակասի: Շուկայում 99 տոկոս բաժինը առևտրային կազմակերպությանը նույն հնարավորությունն է տալիս, ինչ 100 տոկոսի պարագայում էր: Նման դեպքերում շուկայական մեծ իշխանություն ունեցող տնտեսավարող սուբյեկտը կարիք չունի սահմանադրական նորմը պահպանելու համար օրենքի ուժով շուկայում մենաշնորհային դիրք գրավելու: Հետևաբար՝ խնդիրը ոչ թե շուկայում ունեցած բաժնի մեջ է, այլ այդ բաժինը չարաշահելու հնարավորության մեջ: Թե՛ մրցակցության պաշտպանության և թե՛ սպառողների շահերի ուսնահարում թույլ չտալու առումով միևնույն արդյունքն է՝ և՛ մենաշնորհային առևտրային կազմակերպության գործունեությունն է կարգավորվում, և՛ գերիշխող դիրք ունեցողներինը (35, 70, 90, թե 100 տոկոս բաժին ունեցող): Կարգավորող մարմինը միևնույն խնդրի լուծման անհրաժեշտության առջև է կանգնած՝ թույլ չտալ շուկայական իշխանության չարաշահում:

Չորրորդ՝ մրցակցության պաշտպանության թե՛ ամերիկյան և թե՛ եվրոպական մոդելում արգելվում է ոչ թե մենաշնորհային (գերիշխող) դիրքը, այլ գործունեությունը (չարաշահումները):

Հինգերորդ՝ նույնիսկ լավագույն ցանկության և կիրառվող մեխանիզմների դեպքում մենք չենք կարող բոլոր ապրանքային շուկաներում վերացնել մենաշնորհը: Ասենք ավելին՝ դրա վերացման անհրաժեշտությունն էլ չկա: Հետևաբար՝ խնդիրը պետք է հանգի ոչ թե մենաշնորհի վերացմանը, այլ դրա ձևավորման պայմանների սահմանափակմանը և մրցակցության պաշտպանության արդյունավետ մեխանիզմների ներդրմանն ու կիրառմանը:

Վեցերորդ՝ հանրապետության առևտրային կազմակերպությունների մի մասը օբյեկտիվորեն գերիշխող դիրք ունի: Դրանց նկատմամբ պետության վերաբերմունքը պետք է երկակի լինի: Մի կողմից՝ այդպիսի տնտեսավարող սուբյեկտների վարքագիծը պետական կարգավորող մարմնի տեսադաշտում պահելու խնդիր կա (թույլ չտալ դիրքի չարաշահում), մյուս կողմից՝ պետք է արտաքին շուկաներում դրանց մրցունակությունը բարձրացնելու հնարավորություն ստեղծել: Հարկ է համանման մոտեցում ցուցաբերել նաև նոր ձևա-

<sup>5</sup> ՀՀ օրենքի համաձայն՝ մենաշնորհը շուկայում 100 տոկոս բաժին ունենալն է (հոդված 6, մաս 1): Ըստ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ:

վորվող խոշոր առևտրային կազմակերպությունների նկատմամբ, որոնց արտադրանքը արտաքին շուկայում մրցունակ դառնալու խնդիր կունենա:

Միանգամայն այլ մոտեցում են պահանջում այն մենատիրությունները, որոնք գործում են միայն ներմուծման հաշվին: Այդպիսի մենատիրությունների գործունեությունը պետք է ընթանա պետական կարգավորող մարմնի խիստ հսկողության ներքո: Դրանց գործունեության վերահսկողության արդյունավետ ձևերից մեկը ապրանքների գների, ինքնարժեքի կառուցվածքի, ծավալների վերաբերյալ պարբերաբար (ամսական, եռամսյակային) տեղեկատվության<sup>6</sup> ստացումն է<sup>7</sup>: Ինչպես ցույց է տվել Անգլիայի, ԱՄՆ-ի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Եվրոմիության այլ երկրների փորձը, կորպորատիվ հաշվետվությունների նկատմամբ պահանջարկի խստացումը թույլ կտա ի հայտ բերել կոռուպցիայի, հարկերից խուսափելու և սպառողներին ու բաժնետերերին խաբելու բազմաթիվ փաստեր<sup>8</sup>: Այս ուշագրավ փորձի գործադրումը առավել արդիական է Հայաստանի համար:

Հայաստանը խորհրդային իշխանության տարիներին մենատիրության երկիր էր դարձել: Մեքենաշինության, մեծ և փոքր քիմիայի, գունավոր մետալուրգիայի, տեքստիլ արդյունաբերության, կոշիկի, սննդամթերքի շատ տեսակների, կոնյակի, գինու արտադրանքի ճնշող մեծամասնությունն իրացվում էր Հայաստանի սահմաններից դուրս, իսկ պետությունը մնում էր մենատեր երկրի ներսում: Սակայն մենատիրական գործունեություն (դրա դասական դրսևորումներով) ոչ մի ապրանքային շուկայում չէր ծավալվում. ապրանքների իրացումն ու ձեռքբերումն իրականացվում էին պետական մարմինների խիստ հսկողության ներքո:

Քաղաքական անկայնացումից հետո, բազմակացութաձև տնտեսության ձևավորմանը զուգահեռ, առկա տնտեսական «պարարտ հողը» նպաստեց մենատիրական գործունեության ծավալմանը: Միաժամանակ, երկրի տարբեր ապրանքային շուկաներում ի հայտ եկան մենատեր և շուկայական մեծ իշխանությամբ օժտված նոր առևտրային կազմակերպություններ, որոնց մենատիրական գործունեությանն առ այսօր սպառողները բազմիցս են աչքատես լինում: Հանրապետության բազմաթիվ ապրանքային շուկաներում և, առաջին հերթին՝ առաջին անհրաժեշտության, համակենտրոնացման մակարդակը և մենաշնորհացման աստիճանը բարձր են: Չնայած ապրանքային շուկաներում ազատ ու բարեխիղճ մրցակցության ապահովման և դրա շնորհիվ սպառողների պաշտպանության նպատակով 2001 թ. հունվարից ստեղծվել է տնտեսական մրցակցության պաշտպանության պետական մարմին<sup>9</sup>, սակայն դրա շուրջ 17 տարվա գործունեությունը չի կարելի արդյունավետ համարել մեր երկրի տնտեսության մենաշնորհացման բարձր մակարդակի պատճառով, որտեղ ազատ մրցակցության փոխարեն ծաղկում և բարգավա-

<sup>6</sup> Ներկայումս ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետև՝ Հանձնաժողով) ծավալային ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն ստանում է, սակայն գնահատականներ տալու համար լիարժեք չէ:

<sup>7</sup> Դրա անհրաժեշտության վերաբերյալ տես Մ.Վ. Միքայելյան, Տնտեսական մրցակցության և մենաշնորհների պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2005, էջ 65:

<sup>8</sup> Տես **Иванов И.Д.**, Современные монополии и конкуренция (формы и методы монополистической практики). М., 1980, էջ 134:

<sup>9</sup> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի երկրորդ և երրորդ մասերի պահանջների համաձայն՝ ՀՀ նախագահի 13.01.2001 թ. հրամանագրով նշանակվել են Հանձնաժողովի յոթ անդամները (ներառյալ՝ նախագահը և տեղակալը):

ճում է մենատիրական գործունեությունը: Հատկապես անարդյունավետ է վերջին 8–10 տարիների գործունեությունը<sup>10</sup>: Դեռ ավելին, եթե սկզբնական շրջանում, Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ պարբերության համաձայն, Հանձնաժողովն ապահովել է իր գործունեության հրապարակայնությունը (Հանձնաժողովի նիստերը բաց են, իսկ որոշումները պարտադիր տեղադրվել են Հանձնաժողովի կայքէջում) և յուրաքանչյուր տարի հրատարակել է գործունեությունն արտացոլող տեղեկագիր, ապա 2009 թվականից դադարեցրել է տեղեկագրի հրատարակումը, իսկ 2013 թվականից՝ որոշումները կայքէջում տեղադրելը:

Հետևաբար՝ Հանձնաժողովը չի կատարել ՀՀ օրենքի վերոհիշյալ հոդվածով նախատեսված գործառնությունը: ՀՀ ապրանքային շուկաների զգալի մասում աստիճանաբար բարձրացել են համակենտրոնացման մակարդակները, գերիշխող դիրք ունեցող սուբյեկտները մրցակիցներին դուրս են մղել շուկաներից և (կամ) նրանց հաշվին էլ ավելի են ավելացրել դրանցում իրենց բաժինները: Սրանում կարելի է համոզվել՝ ուսումնասիրելով Հանձնաժողովի վերջին տարիների տարեկան գործունեության ծրագրերը, հաշվետվությունները, ապրանքային շուկաներում նկատված տնտեսական երևույթների փոփոխությունների վերաբերյալ գնահատականները, մեկնաբանություններն ու պարզաբանումները:

Այսպես՝ նախորդ տասը տարիների ընթացքում բենզինի և դիզելային վառելիքի շուկաներում էապես փոփոխվել են թե՛ տնտեսավարողների թիվը, թե՛ կազմն ու բաժինների մեծությունը: Նշված տարիներին ի հայտ է եկել մի տնտեսավարող սուբյեկտ («ՍիՓիես օյլ քորփորեյշն» ՍՊԸ), որը 2006 թ. առաջին եռյակում չի եղել (նույնիսկ 5% բաժին չի ունեցել) և հանկարծ այդ շուկաներում դարձել է առաջատարը: Արդար մրցակցության պայմաններում դա անհնար երևույթ է, որին Հանձնաժողովը երբևիցե չի անդրադարձել<sup>11</sup>:

Հանձնաժողովն իր բարձրության վրա չի գտնվել նաև 2018 թ. սկզբին մի շարք ապրանքային շուկաներում ապրանքների գների կտրուկ բարձրացման վերաբերյալ իր պարզաբանումների ժամանակ: Մասնավորապես՝ «Բենզին», «Դիզելային վառելիք» ապրանքային շուկաներում գների փոփոխությունները մեկնաբանվում են որպես հարկային օրենսդրության փոփոխություններով պայմանավորված օբյեկտիվ գործընթաց<sup>12</sup>: Ի պատասխան հունվարի 12-ին սեղմված բնական գազի, դիզելային վառելանյութի և բենզինի գնային բարձրացումների վերաբերյալ ՀՀ Բյուրոյի տնտեսական հետազոտությունների կենտրոնի կողմից կատարված ուսումնասիրությունների վե-

<sup>10</sup> Մինչև 2016 թ. Հանձնաժողովի գործունեության գնահատականի վերաբերյալ առավել հանգամանորեն տես՝ Մ.Վ. Միքայելյան, Գ.Մ. Միքայելյան, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության հիմնախնդիրներ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2017, N2, էջ 229–234: Մ. Միքայելյան, Անբարեխիղճ մրցակցությունը և Հայաստանում դրա կարգավորման մարտահրավերները, «Բանբեր Երևանի պետական համալսարանի». Սոցիոլոգիա, տնտեսագիտություն, 2017, N3(24), էջ 11–18:

<sup>11</sup> Տես ՀՀ ՏՄՊՊՀ 2006 և 2009 թթ. տարեկան գործունեության հաշվետվությունները, 2018 թ. տարեկան գործունեության ծրագիրը և այդ շուկաներում գնաճի վերաբերյալ Հանձնաժողովի մեկնաբանությունը. [http://competition.am/uploads/resources/Report\\_2006\\_Vo\\_13\\_11\\_04\\_07.pdf](http://competition.am/uploads/resources/Report_2006_Vo_13_11_04_07.pdf), [http://competition.am/uploads/resources/Report\\_2009\\_vo52.pdf](http://competition.am/uploads/resources/Report_2009_vo52.pdf), [http://competition.am/uploads/resources/Annual\\_Program\\_2018.pdf](http://competition.am/uploads/resources/Annual_Program_2018.pdf), [http://competition.am/index.php?page=news\\_cases&newsID=1489&lng=1](http://competition.am/index.php?page=news_cases&newsID=1489&lng=1)

<sup>12</sup> Տես մամուլի հաղորդագրություններ (12/01/2018), ՀՀ մրցակցային մարմնի պատասխանը ՀՀ-ին. «Վառելիքի շուկայում չարաշահումների մասին խոսք անգամ լինել չի կարող» [http://competition.am/index.php?page=news\\_cases&newsID=1489&lng=1](http://competition.am/index.php?page=news_cases&newsID=1489&lng=1)

րաբերյալ պարզաբանման՝ Հանձնաժողովը վստահաբար պնդել է. «Վառելիքի շուկայում չարաշահումների մասին խոսք անգամ լինել չի կարող»<sup>13</sup>:

Մեր կարծիքով՝ Հանձնաժողովն այդ վերլուծության մեջ դրսևորել է կամ մասնագիտական լուրջ թերացում և անփութություն, կամ ստանձնել է տնտեսավարողների չարաշահումներն արդարացնելու և «չտեսնելու» պարտականություն: Երկու դեպքում էլ գործ ունենք հարկատուներիս հաշվին գործող պետական մարմնի՝ իր գործառույթները լիարժեք չկատարելու ամենաթողության հետ: Այդ մասին լրացուցիչ անգամ վկայում է ս.թ. հունվարի 1-ից ակցիզային հարկի նոր դրույքաչափերի և դիզելային վառելիքը ավելացված արժեքի հարկով հարկելու հետևանքով գնաճի մեկնաբանության և տնտեսավարողների գործողություններն այդ փոփոխություններով արդարացնելու փորձը:

Տեսնենք, թե իրականում բենզինի և դիզելային վառելիքի գները ինչպես են համապատասխանել օրենսդրական փոփոխություններին (աղյուսակ 1): Նախորդ տարվա դեկտեմբերի 30-ին լիցքավորման կետերում 1 լ բենզինը վաճառվել է 410 դրամով, իսկ դիզելային վառելիքը՝ 380 դրամով: Բենզինի վաճառքի գինը, առանց ԱԱՀ և ակցիզային հարկի, 30.12.2017 թ. կազմել է 322.8 դրամ, ս.թ. հունվարի 15-ին՝ 328.14 դրամ, տարբերությունը՝ 5.34 դրամ: Փաստորեն, ակցիզային հարկի նոր դրույքաչափի կիրառումից հետո տնտեսավարող սուբյեկտը հունվարի 15-ին 1 լիտրի հաշվով 5.3 դրամի չափով լրացուցիչ շահույթ է ստացել, հունվարի 22-ին՝ 13.68, փետրվարի 15-ին՝ 22 դրամի չափով, իսկ վաճառքի գնի (առանց ակցիզային հարկի և ԱԱՀ-ի) հավելաճի տեմպը կազմել է 6.8%, ինչը զգալի է և, գերիշխող դիրքի չարաշահման առումով, պետք է մտահոգեր Հանձնաժողովին:

Նույնիսկ այն բանից հետո, երբ տնտեսավարող սուբյեկտները երկու անգամ 10-ական դրամով բարձրացրին բենզինի գինը, կարգավորողը հարկ չհամարեց չարաշահումների բացահայտման նպատակով վարույթ սկսել:

Մի փոքր այլ է վիճակը դիզելային վառելիքի շուկայում: Անցած՝ 2017 թվականին դիզելային վառելիքը ԱԱՀ-ով չի հարկվել, իսկ ակցիզային հարկը կազմել է բացթողման գնի 10%-ի չափով, բայց ոչ պակաս 1 տ-ի հաշվով 35 հազար դրամից: Ս.թ. հունվարի 1-ից դիզելային վառելիքի ակցիզային հարկի դրույքաչափը 1 տոննայի հաշվով կազմել է 13 հազար դրամ և սկսել է ԱԱՀ-ով հարկվել: 1 լիտրի հաշվով դիզելային վառելիքի ակցիզային հարկը նախորդ տարվա դեկտեմբերին կազմել է 29.17 դրամ, վաճառքի գինը (առանց ակցիզային հարկի)՝ 350.83 դրամ, իսկ 2018 թ. հունվարից, համապատասխանաբար՝ 10.83 դրամ և 355.84-ից դարձել է 372.5 դրամ:

Համադրելիություն ապահովելու համար եթե նույն պայմանների դեպքում նախորդ տարվա դեկտեմբերի համար ենթադրենք, թե դիզելային վառելիքը ԱԱՀ-ով ևս հարկվել է (հաշվի առնենք ԱԱՀ ազդեցությունը), ապա դրա վաճառքի գինը (առանց ակցիզային հարկի և ԱԱՀ-ի) կստանանք՝ 321.6 դրամ: Այս պարագայում, անցած տարվա դեկտեմբերի հետ համեմատած, դիզելային վառելիքի վաճառքի գինը (առանց ակցիզային հարկի և ԱԱՀ-ի) դիտարկվող օրերին աճել է, համապատասխանաբար՝ 32.24, 42.57 և 50.9 դրամով: Այլ կերպ ասած՝ տնտեսավարող սուբյեկտները, ինչպես բնորոշ է խմբատիրային շուկայական տնտեսություն ունեցող երկրներին, օգտվելով հարկային օրենսդրության փոփոխության հնարավորությունից, լրացուցիչ գերշահույթներ են ստացել:

<sup>13</sup> Նույն տեղում:

Աղյուսակ 1

**Բենզինի և դիզելային վառելիքի գների, դրանց կազմերի փոփոխությունների հաշվարկը՝ օրենսդրական փոփոխություններով պայմանավորված**

|                                                                                                                       | 30.12.2017        | 15.01.2018      | 22.01.2018       | 15.02.2018      | 15.02.2018 թ.<br>%-ով՝<br>30.12.2017 թ.<br>նկատմամբ |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------|-----------------|------------------|-----------------|-----------------------------------------------------|
| <b>I. Բենզին*</b>                                                                                                     |                   |                 |                  |                 |                                                     |
| 1. 1 լիտրի գինը (դրամ)                                                                                                | 410               | 430             | 440              | 450             | 109,76                                              |
| 2. Ակցիզային հարկը (դրամ)<br>30.12.2017 թ.՝ 1 տ-ի համար՝<br>25000, 2018 թ. հունվարի<br>1-ից՝ 40000                    | 18.87             | 30.19           | 30.19            | 30.19           | 160                                                 |
| 3. ԱԱՀ (դրամ)                                                                                                         | 68.33             | 71.67           | 73.33            | 75.00           | 109.8                                               |
| 4. Բենզինի վաճառքի գինը՝<br>առանց ԱԱՀ և ակցիզային<br>հարկի                                                            | 322.8             | 328.14          | 336.48           | 344.81          | 106.8                                               |
| 5. Տարբերությունը 30.12.2017 թ.<br>նկատմամբ (դրամ)                                                                    | -                 | 5.34            | 13.68            | 22.01           | -                                                   |
| <b>II. Դիզելային վառելիք**</b>                                                                                        |                   |                 |                  |                 |                                                     |
| 1. 1 լիտրի գինը (դրամ)                                                                                                | 380               | 440             | 450              | 460             | 121.1                                               |
| 2. Ակցիզային հարկը (դրամ)<br>30.12.2017 թ.՝ 10%, բայց ոչ<br>պակաս 1 տ-ի համար՝ 35000,<br>2018 թ. հունվարի 1-ից՝ 13000 | 29.17             | 10.83           | 10.83            | 10.83           | 37.1                                                |
| 3. ԱԱՀ (դրամ)                                                                                                         | -                 | 73.33           | 75               | 76.67           | -                                                   |
| 4. Դիզելային վառելիքի վաճառ-<br>քի գինը՝ առանց ԱԱՀ և ակցի-<br>զային հարկի (հաշվի առած<br>ԱԱՀ-ի ազդեցությունը)***      | 350.83<br>/ 321.6 | 355.84<br>/ -   | 364.17<br>/ -    | 372.5<br>/ -    | 106.2<br>/ 115.8                                    |
| 5. Տարբերությունը 30.12.2017 թ.<br>համեմատությամբ (դրամ)                                                              | - / -             | 5.01<br>/ 34,24 | 13.14<br>/ 42.57 | 21.67<br>/ 50.9 | - / -                                               |

\* Բենզինի խտության գործակիցը. միջինը՝ 1տ=1325 լ:

\*\* Դիզելային վառելիքի խտության գործակիցը. միջինը՝ 1տ=1200 լ:

\*\*\* Եթե 2017 թ. դիզելային վառելիքը ավելացված արժեքի հարկով հարկվեր և ընդունվեր, որ վաճառքի գնի մեջ աշխատավարձը, հիմնական միջոցների մաշվածքը և շահույթը համա-տեղ կազմեն 50%, ապա, առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի, վաճառքի գինը կկազմեր 321.6 դրամ:

Բերենք հավի ձվի՝ 2017–2018 թվականների գների փոփոխության օրի-նակը (աղյուսակ 2):

Հանձնաժողովը հավի ձվի շուկայում վերջին ուսումնասիրությունը կա-տարել է ըստ 2011 թվականի տվյալների, երբ համակենտրոնացման աստի-ճանը երեք սուբյեկտի համար կազմել է 86 տոկոս՝ շուկայի 6 տնտեսավարո-ղի մասնակցության պայմաններում երեք գերիշխող դիրք ունեցող սուբյեկտի առկայությամբ (2010 թվականի տվյալներով ուսումնասիրությունը՝ 6 տնտե-սավարողի մասնակցության պայմաններում գերիշխող դիրք ունեցող երկու սուբյեկտի առկայությամբ, իսկ 2007 թ. ուսումնասիրությունը արձանագրել է համակենտրոնացման աստիճանը երեք սուբյեկտի համար՝ 89.5 տոկոս և 12 մասնակից)<sup>14</sup>:

Այս ապրանքային շուկայում նկատվել է համակենտրոնացման մակար-դակի բարձրացում տնտեսավարող սուբյեկտների թվի էական կրճատմամբ: Հետևաբար՝ դրանց պատճառների ուսումնասիրությունը (հատկապես գների

<sup>14</sup> Տե՛ս [http://www.competition.am/uploads/resources/Report\\_2008\\_vo33\\_.pdf](http://www.competition.am/uploads/resources/Report_2008_vo33_.pdf) և [http://www.competition.am/uploads/resources/Report\\_2010\\_vo137.pdf](http://www.competition.am/uploads/resources/Report_2010_vo137.pdf), [http://www.competition.am/uploads/resources/Report\\_2011\\_vor\\_arm\\_2012\\_04\\_226.pdf](http://www.competition.am/uploads/resources/Report_2011_vor_arm_2012_04_226.pdf)

փոփոխությունը) պետք է դառնա Հանձնաժողովի դիտարկման առարկան: Աղյուսակ 2-ի տվյալները ցույց են տալիս, որ հավի 03 չափսի ձվերի գների կորը անցած տարի ունեցել է պարաբոլայի տեսք՝ 2017 թ. ապրիլից մինչև սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում 58-ից հասել են 53 դրամի, իսկ այնուհետև՝ դեկտեմբերին՝ մինչև 68 դրամի: 2008 թվականի սկզբից նորից գնանկում է արձանագրվել: Յուրաքանչյուր Ամանորի տոներից և Սուրբ Ջատկից առաջ նկատվում է հավի ձվի գնաճ: Դա սեզոնայնությամբ պայմանավորված չէ, հակառակ դեպքում գոնե հունվարին գնանկում չէր լինի (հակառակը Հանձնաժողովի կողմից հիմնավորված չէ): Գնաճի իրավիճակում կարգավորող մարմինը պարտավոր էր արձագանքել և վարույթ սկսել, ինչը վերջին տարիներին չի արել:

Աղյուսակ 2

**«Նոր Զովք» խանութների ցանցում 2017–2018 թթ. վաճառված ձվի գների շարժընթացը<sup>15</sup>**

|           | 2017           |                                | 2018           |                                |
|-----------|----------------|--------------------------------|----------------|--------------------------------|
|           | Գինը<br>(դրամ) | Վաճառքի փաստաթղթի<br>տվյալները | Գինը<br>(դրամ) | Վաճառքի փաստաթղթի<br>տվյալները |
| Փետրվար   | -              | -                              | 61             | N 0040004<br>22.02.18, N03     |
| Մարտ      | -              | -                              | 60             | N 0030038<br>03.03.18, N03     |
| Ապրիլ     | 58             | N 0050008<br>08.04.17, N03     | -              | -                              |
| Մայիս     | 58             | N 0020016<br>09.05.17, N03     | -              | -                              |
| Սեպտեմբեր | 53             | N0020260<br>07.09.17, N 03     | -              | -                              |
| Հոկտեմբեր | 58             | N0040013<br>25.10.17, N 03     | -              | -                              |
| Դեկտեմբեր | 69             | N0020039<br>19.12.17, N 03     | -              | -                              |

Բերված օրինակները եզակի չեն: Բազմաթիվ դեպքեր կարելի է ներկայացնել նաև այլ ապրանքային շուկաներից, որոնց մի մասին մենք անդրադարձել ենք մեր նախորդ հրապարակումներում<sup>16</sup>, իսկ մյուսներին կանդրադառնանք գալիք ուսումնասիրություններում: Սրանք ցույց են տալիս ոչ միայն Հանձնաժողովի գործունեության անարդյունավետությունը, այլև հանցավոր անտարբերությունը և մասնագիտական անիրազեկությունն ու անկարողությունը:

Հիմնախնդրի լուծմանը կարելի է հասնել ինստիտուցիոնալ կառույցների վերափոխման, ինչպես նաև կարգավորման նոր մեխանիզմների կիրառման միջոցով:

Մրցակցության պաշտպանության կարևոր առաջնահերթություններից մեկն էլ Օրենքում առկա այն բացերի և անորոշությունների վերացումն է, որոնք նպաստում են կոռուպցիոն ռիսկերի առաջացմանը և Օրենքի որոշակի դրույթների ոչ օբյեկտիվ կիրառմանը: Առանձին դեպքերում Հանձնաժողովը

<sup>15</sup> Դիտարկումը կատարվել է Երևանի «Նոր Զովք» խանութների ցանցում՝ նկատի առնելով, որ այստեղ ապրանքների միջին գներ են ձևավորվել:

<sup>16</sup> Տե՛ս Մ.Վ. Միքայելյան, Գ.Մ. Միքայելյան, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության հիմնախնդիրներ, նշվ. հրատ., էջ 229–234: Մ. Միքայելյան, Անբարեխիղճ մրցակցությունը և Հայաստանում դրա կարգավորման մարտահրավերները, նշվ. հրատ., էջ 11–18: Մ.Վ. Միքայելյան, Ա.Խ. Մարկոսյան, Է.Ն. Մաթևոսյան, Տնտեսական մրցակցության պաշտպանության հարցի շուրջ (Արցախի տեխնոլոգիական ինստիտուտի պարբերական):

տարբեր տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ նույն խախտման համար տարբեր պատժամիջոցներ է կիրառել: Այսպես օրինակ՝ 2011 թ. օգոստոսի 5-ի նիստում ձեռքի, մարգարինի և սպրեդի շուկաների վերաբերյալ տեղեկատվությունը 9 օրով ուշացնելու համար «Լիա-Կ Գրուպ» ՍՊԸ-ին տուգանել է 200000-ական դրամով (326-Ա, 327-Ա և 328-Ա որոշումներով): Տվյալ գործում հետաքրքիրն այն է, որ Հանձնաժողովը պահանջվող տեղեկատվության համար ընդամենը 5 օր էր սահմանել (2011 թվականի ապրիլի 20-ի դրնբաց նիստում՝ 133-Ա-ից 136-Ա որոշումներով): Համանման տեղեկատվություն (միայն բուսական յուղի հետ կապված) տնտեսավարող սուբյեկտներից պահանջվել էր դեռևս 2004 թ. ապրիլի 30-ին (որոշում 47-Ա)՝ ներկայացնելու ժամկետ սահմանելով 7 օր: Տրամաբանությունը հուշում է, որ Հանձնաժողովը պատասխանատվության միջոց պետք է կիրառեր առնվազն մայիս ամսի երկրորդ կեսին (մինչև մայիսի 22-ը տուգանքը 500000 դրամ էր, մայիսի 23-ից՝ մինչև 5 մլն դրամ): Մինչդեռ պատասխանատվության միջոց կիրառվել է օգոստոսին: Այն տպավորությունն է, թե մինչև օգոստոս ամիսը Հանձնաժողովը տուգանքի նշանակման հարցում «բանակցությունների» մեջ է եղել տնտեսավարողի հետ: Հակառակ դեպքում ինչով բացատրել վերոհիշյալ 3 որոշումներից յուրաքանչյուրով ընդամենը 200000-ական դրամ տուգանք նշանակելը, այն դեպքում, երբ մինչև պատժամիջոցի խստացումը տուգանքի մեծությունը միանշանակ էր՝ 500000 դրամ: Հանձնաժողովին չի արդարացնում որոշման մեջ ամրագրված այն դրույթը, համաձայն որի՝ «Հանձնաժողովը հաշվի է առնում նաև, որ Հանձնաժողովի կողմից պահանջված տեղեկատվությունը եղել է ծավալուն, ինչից ելնելով ամրագրում է, որ արարքը չի պարունակել ուսումնասիրության իրականացմանը խոչընդոտելու շարժառիթներ»: Դրանով նա փորձել է, հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը, մեղմացուցիչ հանգամանք ներկայացնել: Եթե իրոք «պահանջված տեղեկատվությունը եղել է ծավալուն», ապա ժամկետ սահմանելիս Հանձնաժողովը պարտավոր էր այդ հանգամանքը նախապես հաշվի առնել: Այսինքն՝ Հանձնաժողովը նախապես իմացել է, որ «պահանջված տեղեկատվությունը եղել է ծավալուն», տնտեսավարողին որոշումը «կատարել չկարողանալու» վիճակի մեջ է դրել և դրանից հետո միայն «բարյացակամություն» է դրսևորել՝ հաշվի առնելով, որ «պահանջված տեղեկատվությունը եղել է ծավալուն»:

Ի դեպ, տուգանքի հարցում մեղքի իր բաժինն ունի նաև օրենսդիրը՝ Օրենքում իր 12.04.2011 ՀՕ-137 փոփոխությամբ ոչ միարժեքություն ստեղծելով նշանակվող տուգանքների մեծությունների մեջ (մինչև 5 մլն, մինչև 1 տոկոս և այլն): Դրանով մեծացել է կոռուպցիոն ռիսկը<sup>17</sup>:

Այսպիսով՝ Հանձնաժողովի վերջին տարիների գործունեության մի քանի դրվագների ուսումնասիրությունը թույլ է տալիս, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված, այն անարդյունավետ գնահատել: Մեր կարծիքով՝ կարգավորող պետական մարմնի գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացման նպատակով անհրաժեշտ է կատարել ներքոհիշյալ օրենսդրական փոփոխությունները.

1. Օրենքի 36-րդ հոդվածը լրացնել 10-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «10. Պաշտոնական տեղեկագիր չհրատարակելու և (կամ) բաց ընթացակարգով Հանձնաժողովի նիստերում կայացրած որոշումների բովանդակությունը կայքէջում չտեղադրելու համար Հանձ-

<sup>17</sup> Այս մասին տե՛ս **Գ.Մ. Միքայելյան**, Տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրությունում կոռուպցիոն որոշ ռիսկերի մասին, Եվրոպական ակադեմիա, Գիտ. հոդվածների ժող., ԵՏԱ, Եր., 2015, գիրք 6, էջ 255–260:

նաժողովի աշխատակազմի ղեկավարին պատասխանատվության ենթարկելու հարցը դնել Հանձնաժողովի նիստի քննարկման՝ նշանակելով տուգանք մեկ ամսվա աշխատավարձի հնգապատիկի չափով: Նույն խախտումը երկրորդ անգամ կրկնվելու դեպքում, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներկայացնել աշխատակազմի ղեկավարի, ինչպես նաև Հանձնաժողովի այն անդամների հետագա աշխատանքի ոչ նպատակահարմարության հարցը, ում օրոք 2 անգամ թույլ է տրվել այդ իրավախախտումը»:

2. Հանձնաժողովի և նրա առանձին անդամների անկախությունն ապահովելու նպատակով Օրենքում դրա ձևավորման և վերամշակման մեխանիզմ նախատեսել, ըստ որի բոլոր անդամները ռոտացիոն կարգով, ժամկետը լրանալուն նախորդող տարում, կդառնան Հանձնաժողովի նախագահ:
3. Կոռուպցիոն ռիսկերից խուսափելու համար Օրենքի 36-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները. 2-րդ և 3-րդ մասերում «հինգ մլն-ից մինչև երկու հարյուր մլն» արտահայտությունը փոխարինել «երկու հարյուր միլիոն» արտահայտությամբ: 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերում «հասույթի մինչև» բառակապակցությունը փոխարինել «հասույթի» բառով, 7-րդ մասում «մինչև հինգ մլն» արտահայտությունը փոխարինել «500 հազ. դրամ՝ գերփոքր ձեռնարկությունների համար և 5 մլն դրամ՝ մյուսների համար» արտահայտություններով, 8-րդում «մինչև երկու մլն» և 9-րդ մասում «մինչև հինգ մլն» արտահայտությունները փոխարինել, համապատասխանաբար՝ «երկու մլն» և «հինգ մլն» բառակապակցություններով:

Վերոհիշյալները այն նվազագույն փոփոխություններն են, որոնք կնպաստեն կարգավորող պետական մարմնի գործունեության արդյունավետության աստիճանի բարձրացմանը:

### Օգտագործված գրականություն

1. Հայաստանի Հանրապետության սահմանադրություն (փոփոխություններով). ընդունվել է 2015 թ. դեկտեմբերի 6-ին անցկացված հանրաքվեով և ուժի մեջ է մտել դեկտեմբերի 22-ին, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայք՝ [www.arlis.am](http://www.arlis.am):
2. Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին ՀՀ օրենքը, 5 դեկտեմբերի 2000 թ., ՀՕ -112, [http://competition.am/uploads/resources/Law\\_of\\_SCPEC\\_12\\_04\\_2011\\_arm.pdf](http://competition.am/uploads/resources/Law_of_SCPEC_12_04_2011_arm.pdf)
3. ՀՀ ՏՄՊԴՀ 2006 և 2009 թթ. տարեկան գործունեության հաշվետվությունները, 2018 թ. տարեկան գործունեության ծրագիրը և այդ շուկաներում գնաճի վերաբերյալ Հանձնաժողովի մեկնաբանությունը. [http://competition.am/uploads/resources/Report\\_2006\\_Vo\\_13\\_11\\_04\\_07.pdf](http://competition.am/uploads/resources/Report_2006_Vo_13_11_04_07.pdf), [http://competition.am/uploads/resources/Report\\_2009\\_vo52.pdf](http://competition.am/uploads/resources/Report_2009_vo52.pdf), [http://competition.am/uploads/resources/Annual\\_Program\\_2018.pdf](http://competition.am/uploads/resources/Annual_Program_2018.pdf), [http://competition.am/index.php?page=news\\_cases&newsID=1489&lng=1](http://competition.am/index.php?page=news_cases&newsID=1489&lng=1)
4. ՀՀ մրցակցային մարմնի պատասխանը ՀՅԴ-ին. «Վառելիքի շուկայում չարաշահումների մասին խոսք անգամ լինել չի կարող» [http://competition.am/index.php?page=news\\_cases&newsID=1489&lng=1](http://competition.am/index.php?page=news_cases&newsID=1489&lng=1)
5. Մ.Վ. Միքայելյան, Գ.Մ. Միքայելյան, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության հիմնախնդիրներ, «Լրաբեր հասարակական գիտությունների», N2, 2017:

6. Մ. Միքայելյան, Անբարեխիղճ մրցակցությունը և Հայաստանում դրա կարգավորման մարտահրավերները, «Բանբեր Երևանի պետական համալսարանի». Սոցիոլոգիա, տնտեսագիտություն, N3(24), 2017:
7. Մ.Վ. Միքայելյան, Տնտեսական մրցակցության և մենաշնորհների պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2005:
8. Գ.Մ. Միքայելյան, Տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրությունում կոռուպցիոն որոշ ռիսկերի մասին, Եվրոպական ակադեմիա, Գիտ. հոդվածների ժող., ԵՏԱ, Եր., 2015:
9. Иванов И.Д., Современные монополии и конкуренция (формы и методы монополистической практики). М., 1980.

**АШОТ МАРКОСЯН**

*Профессор кафедры общей экономики  
Гюмрийского отделения АГЭУ, доктор экономических наук*

**МИКАЕЛ МИКАЕЛЯН**

*Профессор кафедры экономики и международных  
экономических отношений ЕГУ,  
доктор экономических наук*

**ЭЛЯНОРА МАТЕВОСЯН**

*Преподаватель кафедры финансов и бухгалтерского учета  
ЕГУ, кандидат экономических наук*

***Некоторые приоритеты в сфере защиты экономической конкуренции в Армении.***– Запрещение монопольной деятельности на товарных рынках Армении является одним из приоритетов защиты экономической конкуренции. Однако деятельность государственного регулирующего органа в последние годы можно оценить как неэффективную. Это проявляется в непубличной деятельности, неудовлетворительном профессиональном уровне анализа товарных рынков, что в значительной степени является следствием имеющихся пробелов и неопределенностей в законодательстве.

В статье рекомендуется налагать санкции на государственные должностные лица за непубличные действия. С целью обеспечения независимости Комиссии по защите конкуренции и каждого её члена предлагается при формировании комиссии применить новый механизм. Чтобы смягчить коррупционные риски, необходимо устранить неопределенности в отношении санкций, которые упоминаются в статье 36 Закона о защите экономической конкуренции РА, применив такие критерии, которые устраняют разночтения.

***Ключевые слова:*** экономическая конкуренция, товарный рынок, монополистическая деятельность, защита конкуренции, комиссия.

JEL: D42, L12, L4

**ASHOT MARKOSYAN**

*Professor at the Department of Economics at  
Gyumri Branch ASUE, Doctor of Economics*

**MIKAYEL MIKAYELIAN**

*Professor at the Chair of Economics and  
International Economic Relations YSU,  
Doctor of Economics*

**ELYANORA MATEVOSYAN**

*Lecturer at the Chair of Finance and Accounting YSU,  
PhD in Economics*

***Some Priorities in the Sphere Protecting Economic Competition in Armenia.***– Prohibition of monopolistic activity in commodity markets of Armenia is one of the priorities protecting economic competition. However, the activities of the state regulatory body in recent years can be assessed as not effective. This manifests itself in non-public activities, in the unsatisfactory professional level of analysis of commodity markets, which is largely a consequence of the existing gaps and uncertainties in the legislation.

The article recommends imposing sanctions on public officials for non-public actions. In order to ensure the independence of the Commission for the Protection of Competition and each of its members, it is suggested that when establishing a commission, a new mechanism should be applied. In order to mitigate corruption risks, it is necessary to eliminate uncertainties regarding sanctions, which are mentioned in Article 36 of the Law on Protection of Economic Competition of the Republic of Armenia, applying such criteria that eliminate the discrepancies.

**Key words:** *economic competition, commodity market, monopolistic activity, protection of competition, commission.*  
JEL: D42, L12, L4